

1965 թ. ապրիլի 24-ին Երևանում, Ա. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, կայացավ Երևան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների հանդիսավոր նիստը, նվիրված 1915 թ. եղեռնի զոհերի հիշատակին: Նիստը բացեց ՀՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ն. Խ. Հարությունյանը: Զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՌ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

Ստորև տպագրվում են Ն. Խ. Հարությունյանի բացման խոսքը և Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը:

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ն. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ,
ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս

Հարգելի ընկերնե՛ր։

Ամեն մի ժողովրդի կյանքում կան պատմական բախտորոշ իրադարձություններ, որոնք հավիտյան դրոշմվում են նրա սրտում և դառնում են այդ ժողովրդի կա՛մ ամենամեծ ու խոր ազգային վիշտը, կա՛մ նրա ամենավսեմ, ամենանվիրական, համազգային ուրախության տոնը։

Բազում դարերի տարիք ունեցող հայ ժողովրդի կյանքում այդպիսի երկու հակոտնյա իրադարձություններ են՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կատարված մեծագույն աղետն ու անլուր ողբերգությունը և լենինյան դարաշրջանում նրա ազատագրումը, հզոր վերածնունդն ու ծաղկումը։

Այսօր լրանում է հայ ժողովրդի աննախադեպ եղեռնի 50-րդ տարելիցը։ Հիսուն ապրիլ է անցել այն մահաբեր օրերից, երբ սուլթանական Թուրքիայի կառավարող շրջանները, օգտագործելով համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ընձեռած հնարավորությունները, սկսեցին իրագործել արևմտահայության իսպառ բնաջնջման իրենց վաղուց մշակած ոճրապարտ ծրագիրը։ Պատմական Հայաստանի ավանդական հողը ողողվեց նրա հինավուրց և ստեղծարար ժողովրդի արյունով։

Ժողովրդասպան բռնակալ դահիճները ավերեցին ու թալանեցին երկիրը հայոց, սրախողխող արին և անապատներում մեռցրին նրա մեկ ու կես միլիոն զավակներին և նույնքան հայերի էլ պոկեցին իրենց մայրենի հողից ու հողմացրիվ արին ողջ աշխարհով մեկ, ուր դեգերում են նրանք մինչև հիմա, հոգիներում պահած իրենց կորցրած հայրենիքի անհուն կարոտը։

Եվ ահա, Հիտլերյան ֆաշիզմի այդ նախահայրերը՝ սուլթանական-իթթիհատական ջարդարարները, 1918—1920 թվականներին արշավանքներ սկսեցին նաև Արևելյան Հայաստանի վրա, նպատակ ունենալով նույն ճակատագրին արժանացնել նաև մեր ժողովրդի արևելյան հատվածը։

Միայն սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությունը փրկեցին հայ ժողովրդին վերահաս իսպառ բնաջնջումից և նրա համար բացեցին դեպի կոմունիզմ տանող լուսաշող ու պայծառ ուղին։

Այո՛, մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը 1915 թվականի մեծ եղեռնը աննախադեպ է ոչ միայն մեր ժողովրդի, այլև ամբողջ մարդկության պատմության մեջ։ Սպանվում, մեռնում էր հազարամյակների խորքից եկող մի ամբողջ ժողովուրդ, մի ամբողջ ազգ։

Մենք ամբողջ հոգով ու էությամբ դատապարտում ենք գենոցիդը՝ ժողովրդասպանությունը։

Գենոցիդի համար չկա և չի կարող լինել ո՛չ որևէ իրավական արդարացում, ո՛չ էլ որևէ հայցային վաղեմություն։

Գենոցիդը, լինի դա 1915 թվականի Տեր-Զորում կամ Եփրատի ափերին հայերի զարհուրելի սպանդը, թե երկրորդ համաշխարհային պատերազմում մյուս ժողովուրդների տանջամահ կոտորածները Մայդանեկում և Բուխենվալդում, պետք է մշտապես ու անվերապահորեն դատապարտվի, իսկ նրա կիրառողները պետք է պատժվեն ողջ մարդկության կողմից։

Դատապարտելով գենոցիդի մարդակեր քաղաքականությունը, մենք դատապարտում ենք ո՛չ թե աշխատավոր ժողովրդին, այլ բռնակալ դահիճներին, այդ քաղաքականությունը ստեղծողներին և նրա գործադրողներին։

Հարգելի ընկերնե՛ր։ Հայ ժողովուրդը այսօր առաջին անգամ պետականորեն նշում է մեծ եղեռնի տարելիցը, նրա բյուրավոր անմեղ զոհերի պայծառ հիշատակը։ Մենք նշում ենք այս պատմական տարելիցը ոչ թե ողբով ու լացով, այլ մեր հայրենիքի վերածննդի, նրա բեղուն ներկայի և առավել շքեղ ապագայի անպարտելիության վեհ գիտակցությամբ, այն վսեմ գիտակցությամբ, որ ոչ մի ուժ, սոցիալիստական հասարակարգից բացի, չի բերի մեզ այդ լուսաբաղձ ապագան։

Մենք նշում ենք մեծ եղեռնի 50-րդ տարելիցը այն խոր ու անսասան հավատով, որ դաժան անցյալը չի կրկնվի երբեք և ոչ մի տեղ։

Այո՛, ընկերներ, հայ ժողովուրդը նշում է այսօր մեծ Լենինի 50-ամյակը անվտանգ ու ապահով, որովհետև Հայաստանը այլևս պետականությունից զուրկ մի խլյակ չէ, այլ Սովետական Սոցիալիստական հզոր Միության ամրակուռ ու բարգավաճ հանրապետություններից մեկը։

Եվ երբ այսօր հայ աշխատավորը տուֆից ու մարմարից գործարաններ ու պալատներ է կառուցում, քարքարուտը վեր է ածում արգավանդ հողի, հայ գիտնականն ու արվեստագետը մշակույթի նոր կոթողներ են կերտում մեր ժողովրդի ազատագրական և հեղափոխական ճակատամարտերում նրա երջանկության համար զոհված հերոսների հիշատակին, նրանք վստահ են, որ այդ կոթողները դարեդար կմնան անխախտ ու անվթար, որովհետև մեր ժողովուրդը միայնակ չէ այլևս, որովհետև նա այսօր անզեն ու անպաշտպան չէ, այլ հարյուրապատիկ զրահավորված է Սովետական Միության ժողովուրդների եղբայրական բարեկամության անսասան միասնությամբ ու հզորությամբ։ Եվ այդ անխախտելի միասնության, մեր երկրի խաղաղասիրական քաղաքականության մեջ է հայ ժողովրդի հարատևման և բարգավաճման մեծագույն երաշխիքը, նրա մարդկային արդարացի պատասխանն ու առաջին հատուցումը։

Հայ ժողովրդի կյանքի մղձավանջային օրերին ֆրանսիական ականավոր գրող Անատոլ Ֆրանսը Սորբոնի համալսարանում արտասանած իր ճառում ասել է. «Հայաստանը մեռնում է, բայց նա կվերածնվի։ Այն ժողովուրդը, որ չի ուզում մեռնել, երբեք չի մեռնի»։

Եվ հայ ժողովուրդը չմեռավ. չմեռավ, որովհետև իր բազմադարյան պատմության ամենածանր պահին նա որդեգրեց իր գոյությունն ու հարատևությունն ապահովող միակ կենսական ծրագիրը, մեծ Հոկտեմբերի մեծ գաղափարներն ու սկզբունքները։ Եվ դա ոչ միայն նրա համար, որ սոսկ գոյություն ունենար աշխարհում, այլև նրա համար, որ այդ գոյության մեջ նա տեսավ այն բարձր խորհուրդը, որը թանկագին ու իմաստալի է դարձնում ամեն մի ժողովրդի գոյություն։ Այդպես էլ եղավ. լենինյան իմաստուն ազգային քաղաքականության շնորհիվ, հայ ժողովրդի հերոսական աշխատանքով և ստեղծագործական խիզախումներով, մեր երկիրը վերածնվեց և դարձավ այսօրվա գեղեցիկ ու բարգավաճ Սովետական Հայաստանը։

Եվ հայ ժողովրդի բազում դարեր մղած պայքարի փառապսակը, նրա բյուրավոր զոհերի հիշատակը հավերժացնող ամենավսեմ ու վեհատես կոթողը դա մեր վերածնված Սովետական Հայաստանն է, ամբողջ աշխատավոր հայության մայր հայրենիքը։

Հարգելի ընկերնե՛ր։ Խնդրում եմ հոտնկայս հարգել մեր զոհված եղբայրների և քույրերի պայծառ հիշատակը։ (Հասարակությունը հոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգում է զոհվածների հիշատակը)։

ВСТУПИТЕЛЬНОЕ СЛОВО

Н. Х. АРУТЮНЯН

Председатель Президиума Верховного Совета Армянской ССР,
академик АН Арм. ССР

(Р е з ю м е)

24 апреля 1965 г. в Ереване состоялось торжественное собрание представителей общественности города, посвященное памяти жертв резни армян в Турции в 1915 г.

Характеризуя эту резню как один из первых в истории актов геноцида в отношении целого народа, председатель собрания в своем вступительном слове кратко освещает путь, пройденный армянским народом от национальной трагедии к возрождению в условиях советской действительности.